

բաներ էին: — Աշխարհքը լայն էր, եւ մարդկութեան որեւէ բեկոր կարելի էր գտնել բանուորա-գիւղացիական իշխանութիւն մը ստեղծելու:

Սակայն, սառն իրականութիւնը հայ բուլշեւիկները կաշկանդեց ներկայ Հայաստանի սահմաններու մէջ, եւ ուրիշներու վրայ դըրուած յոյսերը օգը ցնդեցին:

Հայ բուլշեւիկները սուսական բուլշեւիզմի հետ ձուլուած եւ անոնց օրինաւորութեան ընդգրկելով, իրենց ետեւի բոլոր կամուրջները այրեցին: Անոնք զլազին իրենց պարսութիւնը եւ զիտակեցեան, որ իրենց ուժի տակի հողը չամրացաւ: Բայց իրենց ուրիշ ճամբայ չէր մնար, բայց եթէ աւելի պինդ փարել Պորհրդային Ռուսաստանին, հայկական հարցը գոյութիւն ունենալէ զուրկ հռչակել, եւ բարձրաբարբառ յայտարարել, թէ չնորհիւ Պորհրդային կարգերու՝ ազգամիջեան խաղաղութիւնը հաստատուեցաւ կոմկոմի մէջ եւ թէ՛ մանաւանդ որ իրենք յաջողեցան հայոց եւ թրքաց միջեւ «բարեկամութիւն» մը մշակել, որ պայմանաւորուած է Ռուսաստանի ալ բարեկամութեամբ:

Մնացած խնդիրները կը լուծուին համաշխարհային յեղափոխութեան շնորհիւ, որ իր ալիքները պիտի տարածէ Ասիա, Եւրոպա ու Ափրիկէ, իսկ հայը այս ստաջանոր շարժումի մէջ իր մասնակցութիւնն ունի եւ Մերձաւոր Արեւելքի հորիզոններու վրայ առաջադաշի դերը ստանձնած է, չնորհիւ հայ բուլշեւիկներու:

Այս նահանջը տեղի կ'ունենար 1923-ին. իսկ տարի մը յետոյ, Ռուսաստանի մեծաւորներու հետեւողութեամբ, Հայաստանի բուլշեւիկ երեւելիները ստիպուեցան յայտարարել, որ համաշխարհային յեղափոխութեան գործը օրերու խնդիր չէ, այլ կարող է Բաքու-Երեւան տարի ուշանալ: Այս շողջողուն հորիզոններէն ալ կ'ծկուելէ յետոյ, հայ բուլշեւիկներն ինքզինքնին դառն առուներու եւ ճահիճներու «գործին» մէջ: Եթէ առուներն անցնելը այդ փոքրիկ մարդոց պիտի յաջողի, անոնց խեղդելը ճահիճներու մէջ, անխուսափելի է:

Ահա, թէ ուր հասան այսօր հայ բուլշեւիկները իրենց Պորհրդային Ռուսաստանի օրինաւորութեան:

* * *

Իրականութեան այս դառն հարուածները բաւական եղան ներկայ Ռուսաստանի օրինաւորութեան անանկ հռչակելու:

Հայ ժողովուրդը, երկար ժամանակ ըստ պատելէ եւ դիտելէ յետոյ, յոյսը կտրեց բուլշեւիկեան Ռուսաստանէն եւ հիմա կը սպասէ տեսնելու Պորհրդային կարգերու տապալումը, որմէ յետոյ կարող է նոր ճանապարհ բացուիլ հայ ժողովուրդի զարգացման:

Բայց, հայ խոշոր զանգուածներէն անջատ, հայ բուլշեւիկեան կազմակերպութիւնը քաղաքական տէրը կը մնայ Ռուսաստանի սահմաններու մէջ գտնուած մօտ երկու միլիոն հայութեան, եւ կը շարունակէ հետեւիլ բուլշեւիկեան Ռուսաստանի օրինաւորութեան: Բուլշեւիզմը խաղաղ բարեփոխման ենթակայ չի կրնար ըլլալ, որովհետեւ բարեփոխումը զայն կ'առաջնորդէ դէպի մահ: Նոյնը հայ բուլշեւիկներու մասին կարելի է ըսել. անոնք սուսական օրինաւորութեան շնորհիւ կարող չեղիլ. այդ կ'ըլլար մահացու իրենց համար: Արդ՝ անոնք ստիպուած են մնալ այդ հարկադրական քաղաքական ուղեգծին մէջ: Սակայն, անոնք ստիպուած են արդարացին իրենց այդ վարքագիծը, եւ այժմ ջանքեր կը թափեն իրենց թոկին կապած պահել Ռամկափարներն ու խայտարդէտ հաւաքականութիւն մը, որ Դաշնակցութեան եւ հայ ժողովրդի մեծամասնութեան տեսակէտներուն հակառակ են:

Հետաքրքիր է դիտնալ անոնց պատճառաբանութիւնները եւ խորհրդածել անոնց վրայ: Եթէ մէկ կողմ թողնենք Չինաստանի «յեղափոխութիւն»ը, անգլիական իմպերիալիզմը, Պորհրդային «տնտեսական վերելք»ը, որոնց մասին ամենօրեայ ճառերն ու վարդապետն մարգարէութիւնները կը շարունակուին, ու ուշադրութեան արժանիք բոլոր այն գրութիւնները, ճառերն ու դադոնի փափուքները, (այս դադոսաւորները նշանաւոր են, մանաւանդ դադութիւններու մէջ, ուր այցելած են բուլշեւիկներու մեծ ու պզտիկ ներկայացուցիչները, հայ գաղութը իրենց կապելու համար) կը տեսնենք, որ հայ բուլշեւիկները իրենց Պոր-